ՀՏԴ941(479.243)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ 1912-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բենո Միրզոյան
Արցախի Պետական Համալսարան
Արցախ

Անոտացիա

Հայկական հարցը միջազգային դիվանագիտական հարց դառնալուց հետո 130 տարուց էլ ավելի ժամանակ է անցել, և, իհարկե, այդ ընթացքում բազմաթիվ մեծարժեք հետազոտություններ, ուսումնասիրություններ են կատարվել, տեսակետներ են առաջադրվել և այլն, ու առաջին հայացքից կարող է թվալ, թե ինչ-որ նորություն ասել այդ ուղղությամբ անհնարին է, ինչպես նաև կարող է թվալ, թե թեմայի արդիականությունը նույնպես կասկածի տակ է գտնվում: Բայց մենք այդպես չենք համարում և հաշվի առնելով, որ ոչ միայն Հայկական հարցը չի առ այսօր լուծվել, այլև արդեն Հայոց մեծ ցեղասպանությունից անցել է մեկ դար, որոշեցինք հերթական անգամ անդրադառնալ այդ հարցին:

Թեման ընտրելով՝ խնդիր ենք հետապնդել անդրադառնալ ոչ միայն Հայկական հարցի չլուծվածության մեր կարծիքները նույնպես շարադրելու միտումով, այլև փորձելով յուրօրինակ զուգահեռներ անցկացնել Հայկական հարցի և Ղարաբաղյան հիմնախնդրի քննարկումների միջև, տեսնելու համար դիվանագիտական այն որոգայթները, որոնցից կարելի է խուսափել գոնե այսօր: Ելնելով այս ամենից՝ գտնում ենք, որ հետազոտության նշված նյութն արդիական է նաև այսօր և լինելու է այդպիսին մինչև այն իսկապես արդարացի լուծում չստանա:

Նշված թեման ընտրել ենք նաև այն պատճառով, որպեսզի կարողանանք ապացուցել, թե անարդարությունը երբ արժանի հակահարված, պատասխան չի ստանում, ինչպիսի ցավալի հետևանքներ կարող է ունենալ, ուստի հուսով ենք նաև, որ մեր ժողովուրդը միջազգային ասպարեզում այսուհետև կկարողանա անարդարությանն արդյունավետ հակազդեցություն ցուցաբերել:

Բանալի բառեր՝ *Հայկական հարց, բարենորոգումների ծրագիր, միջազգային դիվանագիտություն, բալկանյան պատերազմ, ռուս-թուրքական 1914թ. համաձայնագիր, ազգային պատվիրակություն, մեծ տերություններ, Բարձր դուռ:*

20-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին Եվրոպան կանգնած էր բախտորոշ իրադարձությունների առջև: Մայրցամաքի տերությունները բաժանված էին ռազմաքաղաքական երկու հակադիր խմբավորումների: Դրանցից մեկը Եռյակ համաձայնությունն էր (Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը), մյուսը՝ Եռյակ զինակցությունը (Գերմանիա, Ավստրիա, Իտալիա), որոնք կանգնած էին զինված, իրար դեմ հանդիման: Հետևաբար և' Հայկական հարցը, և' հայերի պահանջները չէին կարող միանշանակ ընդունվել հակադիր խմբավորուների ու գերտերությունների մեջ [26;10]:

Հայկական հարցը դարձել է միջազգային քննարկումների առարկա, որովհետև.

1. Պատերազմի նախօրյակին ամենախոշոր իրադարձությունը թերևս Հայկական հարցի վերաբացումն էր՝կապված Բալկանյան առաջին պատերազմում սլավոնական ժողովուրդների ձեռք բերած հաղթանակների հետ:

2. Այդ ժամանակաշրջանում առաջացել էին հայկական հարցի վերաբացման համար բոլոր անհրաժեշտ նախադրյալները.
3. Բալկանյան պատերազմում Թուրքիան պարտվել է.
4. Մեծ տերությունները լրջորեն հետաքրքրված էին պատերազմի արդյունքներով.
5. Ռուսական դիվանագիտությունը ընդգծված բարյացակամ վերաբերմունք էր դրսևորում Հայկական հարցի նկատմամբ.[24; 82-83]:

Բեմահարթակը բացվեց 1912-1913թթ. Բալկանյան պատերազմներից անմիջապես հետո, երբ կայսրը ամբողջ 19-րդ դարի ընթացքում ստիպված է եղել զիջելու իր տարածքի 60%-ից ավելին: Այժմ պետության առջև ծառացած էր նրա մեծագույն կորուստը՝ և՛ տարածքի 80%-ից ավելին, և՛ իր եվրոպական մասի ազգաբնակչության 70% [4;15]:

1912-1913 թթ.,երբ բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետևանքով նոր հարված հասցվեց թուրք բռնատիրությանը, Հայկական հարցը վերստին դարձավ մեծ տերությունների և Թուրքիայի միջև բանակցությունների առարկա: Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցի շուրջ սկսվեց բարդ պայքար, որը շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը [32]:

Պատերազմի նախօրյակի ամենախոշոր իրադարձությունը թերևս Հայկական հարցի վերաբացումն էր՝ կապված Բալկանյան առաջին պատերազմում սլավոնական ժողովուրդների ձեռք բերած հաղթանակի հետ [32]: Բալկանյան առաջին պատերազմում Թուրքիայի կրած ծանր պարտությունը աշխուժացնում է հայ ազգային-ազատագրական շարժումները. հասունանում է այն միտումը, որ արևմտահայության ծանր վիճակի վրա մեծ տերությունների ուշադրությունը հրավիրելով՝ հնարավոր կդառնա Բալկանյան հիմնախնդիրների քննարկման հետ մեկտեղ քննարկվել նաև հայկական նահանգներում բարենորոգումների անցկացման խնդիրը: Նորից միջազգային դիվանագիտության ասպարեզ է մտնում Հայկական հարցը:

Դեռ 1912թ. հուլիսի 7-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը բողոքագիր էր ներկայացրել Թուրքիայի արդարադատության նախարարությանը՝ պահանջելով վերջ տալ հայերի նկատմամբ գավառներում իրականացվող բռնություններին: 1912 թ. հոկտեմբերի 2-ին կաթողիկոս Գևորգ 5-րդը պաշտոնապես դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով, որ նա միջամտի Նիկոլայ 2-րդի՝ հայերի պաշտպանությամբ հանդես գալու հարցին: Միևնույն ժամանակ Նիկոլայ 2-րդին ուղղված նամակում Վ. Դաշկովն այն կարծիքն է հայտնում, որ Եվրոպան կմիջամտի Հայկական հարցին, ուստի անհրաժեշտ է, որ Ռուսաստանը հանդես գա արևմտահայերի պաշտպանությամբ, ինչը հենարան կդառնա հետագայում Թուրքիայի դեմ հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ աջակիցներ ձեռք բերելուն:

1912 թ. հոկտեմբերին սկսվում է Բալկանյան առաջին պատերազմը: Դրա հետ կապված նախատեսվում էր դեկտեմբերին դեսպանաժողով՝ դեսպանների վեհաժողով բացել Լոնդոնում: Այս առիթով Գևորգ 5-րդը դիմում է եգիպտահայ նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշային, որը տվյալ պահին գտնվում էր Փարիզում, որպեսզի նա դեսպանաժողովին ներկայացնի հայկական բարենորոգումների խնդիրը, իսկ նոյեմբերի 10-ին Պողոս Նուբարին նշանակում է իր լիազոր ներկայացուցիչը՝ իրավունք տալով նրան ազգային պատվիրակություն կազմել և բանակցություններ վարել: Հայ քաղաքական շրջանները որոշեցին օգտվել բարենպաստ առիթից եւ մեծ տերություններին հիշեցնել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների մասին: Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ 5-րդը կոնդակով դիմեց ցարական կառավարությանը, որպեսզի Ռուսաստանը հանդես գա արեւմտահայերի պաշտպանությամբ: Կաթողիկոսը նաեւ Պ. Նուբարին լիազորեց եվրոպական

տերությունների մոտ բարձրացնել հայկական բարենորոգումների խնդիրը: Հայկական հարցը նախատեսվում էր արծարծել Լոնդոնի խորհրդաժողովում (1912թ. դեկտեմբերի 3 – 1913թ. մայիսի 30), ուր քննարկվում էր Բալկանյան երկրների եւ Թուրքիայի հաշտության հարցը, ապա՝ ֆինանսական համաժողովում: Սակայն տերությունները (ո՛չ Լոնդոնում, ո՛չ էլ Փարիզում) Հայկական հարցը չքննարկեցին [11;8]:

1912թ. դեկտեմբերի 22-ին փոխարքա Վորոնցով-Դաշկովը կաթողիկոսի դիմումին պատասխանեց, որ ռուսական կառավարությունը հայերի շահերին բոլորովին անհամապատասխան է համարում, որ Թուրքիայի հայերի հարցը քննարկվի Բալկանյան ճգնաժամին նվիրված առաջիկա կոնֆերանսում, որովհետև լիակատար հիմքով կասկածում է Հայկական հարցում եվրոպական տերությունների միակամությանը [21;4]:

1912թ. դեկտեմբերին Պոլսի հայոց Ազգային Ժողովը իր հերթին որոշում է Լոնդոնում բարձրացնել Հայկական հարցը՝ 6 վիլայեթների ինքնավարության ձեռքբերման հույսով: Դա անհանգստացնում է թուրքական կառավարությանը, որը մեծ տերությունների միջամտությունը կանխելու նպատակով պահանջում է, որ կաթողիկոսը և Պողոս Նուբար փաշան դիմեն իրեն՝ խոստանալով բարենորոգումներ անցկացնել: Այդ նպատակով ընտրվեց Ապահովության հանձնաժողով, որի մեջ մտավ Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Լ. Տեմիրճիպաշյանը և Մ. Ոսկանյանը [8;157]: Թուրքերը շտապ մի նախագիծ են կազմում, ըստ որի Վան, Տրապիզոն, Դիարբեքիր, Բիթլիս, Էրզրում, Սեբաստիա 6 հայկական վիլայեթներից բարեփոխումներ պետք է անցկացվեին միայն առաջին չորսում:

1913 թ. ապրիլին արևմտահայերը ռուսական դեսպան Գիրսին են ներկայացնում բարենորոգումների իրենց տարբերակը: Նախագծի համաձայն բարենորոգումների իրականացման հսկողությունը դրվում էր բոլոր տերությունների վրա, իսկ իրագործման ընթացքի հսկողությունը՝ Ռուսաստանի վրա:

Ազգային պատվիրակությունը ակտիվ բանակցություններ սկսեց եվրոպական կառավարությունների հետ, ինչպես նաև քայլեր ձեռնարկեց Եվրոպայի հասարակական կարծիքը հօգուտ հայկական բարենորոգումների տրամադրելու ուղղությամբ: Պողոս Նուբարը Հայկական հարցը Եվրոպային ներկայացնում էր ոչ թե հայերի նկատմամբ խղճահարություն առաջացնելու տեսանկյունից, ինչպես դարեր շարունակ վարվել էին հայ գործիչները, այլ փորձում էր Հայաստանում բարենորոգումների գործադրման շահավետությունը ցույց տալ եվրոպացիներին, իսկ հակառակ պարագայում սպառնում էր, որ հայերն այլևս չեն հանդուրժի տիրող վիճակը և ապստամբություն կբարձրացնեն, որի արդյունքում Ռուսաստանը կարող էր գրավել Արևմտյան Հայաստանը: Դա բավական արդյունավետ եղավ:

Հայկական բարենորոգումների վերաբերյալ բանակցություններն սկսվել են 1913 թ. գարնանը՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի մասնակցությամբ: Այդ մեծ տերությունները համաձայնություն ունեին մի հարցում, որը օսմանցիները ըստ էության համարում էին «քայլ մասնատման ուղղությամբ». «Ասիական Թուրքիան չի կարող շատ երկար գոյություն ունենալ», ասել է Սանկտ Պետերբուրգի Ֆրանսիայի ժամանակավոր դեսպանը, որն առաջարկել է Անատոլիայում «ստեղծել ազգությունների վրա հիմնված փոքր պետություններ, ինչպես հայկական, սիրիական ու արաբական» [11;14]:

1912 թ. դեկտեմբեր-1913-ի հունվար ամիսներին ռուսական, անգլիական և ֆրանսիական կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվում Օսմանյան Թուրքիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների նախագիծ մշակելու վերաբերյալ: 1913 թ. հունիսի 4-ին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը քննարկում և ընդունում են Կ. Պոլսի ռուսական

դեսպանատան աշխատակից Անդրեյ Մանդելշտամի բարենորոգումների իրականացման ռուսական տարբերակը [4;163]: Այն նախատեսում էր հայկական վեց վիլայեթներից կազմել մեկ նահանգ: Նահանգը ղեկավարվելու էր թուրքահպատակ քրիստոնյայի կամ եվրոպացի գեներալ-նահանգապետի կողմից: Նա իրականացնելու էր գործադիր իշխանությունը: Գեներալ-նահանգապետին էին ենթարկվելու ոստիկանական և զինվորական ուժերը: Օրենսդիր մարմինը կազմվելու էր տեղի մահմեդական և քրիստոնյա բնակչությունից: Առաջարկվում էր վերացնել համիդիե գնդերը: Պաշտոնական լեզուն լինելու էր թուրքերենը: Զուգահեռաբար թույլ էր տրվում օգտագործել հայերենը և քրդերենը: Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին մեծ տերությունները [8;10]: Նահանգապետերն ունենալու էին զինված ուժեր, որոնք պետք է հետևեին նահանգների ներքին կարգ ու կանոնին: Հայերին արտոնվում էր մահմեդականների նման զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Հայկական դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում Օսմանյան պետությունը [2;133]: Բայց ահա առաջացավ բոլորովին անկանխատեսելի մի լուրջ խոչընդոտ: 1913-ի Հունվարի 10-ին Թուրքիայում կատարած պետական հեղաշրջման հետևանքով վերստին իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, որոնք դեն նետեցին իթթիհաթականների նախագիծը և հրապարակ հանեցին ամբողջ կայսրության մեջ բարենորոգումներ մտցնելու սեփական նախագիծը [33]:

1913 թ. հունիսի 3-24-ին Ռուսաստանի նախաձեռնությամբ՝ Կ. Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում՝ ավստրո-հունգարական դեսպանատան շենքում անցկացվեց կոնֆերանս, որտեղ ստեղծվեց վեց մեծ տերությունների ներկայացուցիչներից կազմված «Հայկական բարենորոգումների հանձնաժողով» [11;15]:

1913 թ. հուլիսի 3-ին իր աշխատանքները սկսեց եվրոպական դեսպաններից կազմված «Հայկական բարենորոգումների հանձնաժողովը», որտեղ բարենորոգումների նախագիծը հանդիպեց Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և հատկապես Գերմանիայի դիմադրությանը, ովքեր ձգտում էին թույլ չտալ, որպեսզի Թուրքիայում ուժեղանան Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքերը, փորձում էր ձախողել ռուսական նախագիծը և քննարկել բարենորոգումների թուրքական նախագիծը: Գերմանիան արտահայտեց իր անհանգստությունը Ռուսաստանի «հայկական» քաղաքականության առթիվ [17;134]: Հունվարի 27-ին Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանն ասում էր Գրեյին, որ իր կառավարությունը մեծ նշանակություն է տալիս Փոքր Ասիայի տարածքային ամբողջականության պահպանմանը և անհանգստացած է Ռուսաստանի մեծ հետաքրքրությամբ՝ Հայաստանով, ինչպես նաև Կովկասում նրա զորքերի կուտակման փաստով[29; 146-147]: «Գերմանիան չի կարող անտարբեր մնալ այն դեպքում,- շարունակում էր դեսպանը,- եթե Ռուսաստանը մտնի Հայաստան, իսկ Ֆրանսիան՝ Սիրիա»: Ավստրո-գերմանական կողմը առաջարկում էր ստեղծել երկու նահանգ, ընդ որում՝ բաժանումը պետք է կատարվեր այնպես, որ, բացի հայկականից, դրանց մեջ մտնեին նաև մահմեդական շրջաններ: Փոխադարձ համաձայնության հասնելու համար բանակցություններ սկսվեցին ռուսական և գերմանական կողմերի միջև և արդյունքում կազմվեց վեց կետից բաղկացած մի նախագիծ, որը ներկայացվեց թուրքական կառավարությանը:

1913թ. հոկտեմբերի 10-ին թուրքական կառավարությունը հայտարարեց բարենորոգումների նշված ծրագիրը իրականացնելու պատրաստակամության մասին, չնայած վերապահումները, քաշքշուկները շարունակվում էին: Թուրքերը առանձնապես դեմ էին նահանգների

խորհուրդներում և վարչական մարմիններում քրիստոնյաների և մահմեդականների հավասար քանակությանը, «համիդիեն» ցրելուն: Վերջիվերջո հարցը լուծվում է այսպես. Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներում առաջնորդվել հավասարության սկզբունքով, իսկ Դիարբեքիրի, Սեբաստիայի, Խարբերդի և Տրապիզոնի նահանգային խորհուրդներում մահմեդականները կազմելու էին 2/3-ը, քրիստոնյաները՝ 1/3-ը: Միաժամանակ գերմանական դիվանագիտությունը սկսել էր եռանդուն կերպով հանդես գալ բարենորոգումների երիտթուրքական ծրագրի իրագործման օգտին: Գերմանական կողմը ամենևին չէր կարող հանդուրժել Ռուսաստանի ներկայության մեծացմանը ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թուրքիայում և Մերձավոր Արևելքում:

1914թ. Ռուս-Թուրքական համաձայնագիրը. Դրանից հետո միայն, 1914թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիր է ստորագրվում: Փաստաթուղթը ստորագրեցին Կոստանդնուպոլսում Ռուսաստանի ժամանակավոր հավատարմատար Գուլկևիչը և մեծ վեզիր ու արտգործնախարար Սաիդ Հալիմ փաշան[9;50]: Ըստ համաձայնագրի՝ Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու նահանգների. մեկի կազմում էին Վանը, Բիթլիսը, Խարբերդը, Դիարբեքիրը, մյուսում՝ Էրզրումը, Սեբաստիան և Տրապիզոնը: Վերջին վիլայեթում արհեստականորեն ստեղծվելու էին մահմեդականների մեծամասնություն: Նահանգները ղեկավարելու էին եվրոպացի գեներալ-նահանգապետները, որոնց թեկնածությունն առաջարկելու էին տերությունները, իսկ սուլթանը հաստատելու էր: Սուլթանը նշանակելու էր բարձր պաշտոնյաներին, իսկ մյուսներին՝ նահանգապետը: Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթներում պաշտոնները բաշխվելու էին հավասարության հիմունքներով, իսկ մյուսներում՝ ըստ մահմեդականների և քրիստոնյաների տոկոսային հարաբերակցության: Հայերը իրավունք էին ստանում զենք կրել, իսկ համիդիե գնդերը վեր էին ածվելու պահեստի հեծելազորի: Յուրաքանչյուր ազգի կրթության համար հատկացվելու էր այնքան գումար, որքան այդ նպատակով հարկ կմուծեին: Նահանգապետներն էին լուծելու հողային վեճերը: 1914 թ. ապրիլի 15-ին Մեծ տերությունների ներկայացրած թեկնածուներից Բարձր Դուռը 5 տարով նահանգապետներ է նշանակում հոլանդացի Լ. Վեստենենկին և նորվեգացի Ն. Հոֆին [24;135]:

Հոլանդացի դիվանագետ Վեստենենկը Կոնգոյի նախկին նահանգապետ նշանակվեց Էրզրումի, Սվազի, Տրապիզոնի հատվածի գերագույն կառավարիչ, իսկ նորվեգացի գնդապետ Հոֆը՝ Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի հատվածի: Առաջինի նստավայրն էր լինելու Էրզրումը, իսկ երկրորդինը՝ Վանը: Կառավարիչներին վերապահվում էր հատվածի վարչական, դատական և ոստիկանական իշխանության իրավունք: Լեոն «Անցյալից» իր գրքում ողբերգական է գնահատում համաձայնագիրը. «Աչքը լույս հայ ժողովրդի… 1915թ-ի բնաջնջման հաստատ հիմունքներն էին դրվում»:

Այսպիսով կարելի է հանգել հետևյալին.

1. Բարձր Դուռը հինգ տարով համապատասխան պայմանագիր էր ստորագրում գլխավոր տեսուչների հետ.
2. Գլխավոր տեսուչներին իրավունք էր վերապահվում Բարձր Դռան հաստատմանը ներկայացնել սեկտորների բարձր պաշտոնյաների և դատավորների թեկնածություններ, ինչպես նաև նշանակել և պաշտոնից ազատել մյուս այլ պաշտոնյաների.
3. Ամեն սեկտորում ստեղծվում էր ընտրովի խորհուրդ, որը հավասարաչափ կազմված էր լինելու մահմեդականներից և քրիստոնյաներից.

4. Նույն հավասարության սկզբունքը կիրառվելու է երկու սեկտորների բոլոր վարչական մարմինների կազմավորման պարագայում.
5. Բարձր Դուռը իրավունք է վերապահելու մեծ տերություններին, իրենց դեսպանների և հյուպատոսների միջոցով, հսկելու բարենորոգումների իրագործումը.
6. Բարձր Դուռը համագործակցելու է տերությունների հետ Արևելյան Անատոլիայի երկու սեկտորներում այլ բարենորոգումների կիրառման հարցում:

Չնայած համաձայնագիրը շատ բաներով թերի էր, սակայն հայերին տալիս էր քիչ թե շատ առաջընթացի և զարգացման հնարավորություն: Դա կարող էր քաղաքացու տարրական իրավունքներ ապահովվել արևմտահայության համար, նպաստել նրանց տնտեսական, քաղաքական ու մշակութային առաջընթացին [5;29]:

Նահանգապետները մայիսի 10-ին թուրքական կառավարության հետ պայմանագրեր են ստորագրում իրենց պարտականություններին անցնելու վերաբերյալ և արդեն պատրաստվում էին Արևմտյան Հայաստան գալու, երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և երիտթուրքերը, մի կողմ դնելով բարենորոգումների ծրագիրը, ոչ միայն այն չկատարեցին, այլև որոշեցին Հայկական հարցը լուծել իրենց իսկ տարբերակով՝ ամբողջությամբ բնաջնջելով հայ ժողովրդին:

1914 թ. Հայկական բարենորոգումների համաձայնության անհանդուրժելի բեռը հրատապ դարձրեց պատերազմի մեջ մտնելու օսմանյան որոշումը: «Մեր միակ նպատակը համաշխարհային այս պատերազմի միջոցով գոյություն ունեցող բոլոր այն օտարերկրյա պայմանագրերից ձերբազատվելն է, որոնցից յուրաքանչյուրը հարված էր հասցնում մեր ներքին անկախությանը»,- մտաբերում է իթթիհաթական ղեկավար Ջեմալ փաշան և ավելացնում, որ «ցանկալի է նաև պատառոտել Արևելյան Անատոլիայի բարենորոգումներին վերաբերվող համաձայնագիրը»: Բոլորովին հարկադրված չլինելով մտնելու պատերազմի մեջ՝ իթթիհաթականները ողջունեցին այն, ինչպես 1914 թ. հաստատում է Ջեմալ փաշան: «Ես հավաստիացնում եմ, որ Գերմանիան մեզ չի ստիպել մտնել պատերազմի մեջ, ինչպես պնդում են ոմանք»,- հայտարարել է Ջեմալը. «ոչ, մենք ձգտում ենք Գերմանիայի հետ դաշինքի որովհետև գիտենք, որ մեր ապագան կապահովվի միայն պատերազմի միջոցով»:[31;180]

Այսպիսով, 1914թ. նոյեմբերին պաշտոնապես մտնելով պատերազմի մեջ՝ երիտթուրքերը անվավեր դարձրին բարենորոգումների համաձայնությունը, սակայն, 1915թ. ձմռանը դրա վերականգնելու վտանգ գոյացավ: [4;165]

Ռուսական բանակներն առաջանում էին, և բարենորոգումների ենթակա նահանգների գրավվումը կարող է կատարվել որևէ պահի և հանգեցնել անկախ Հայաստանի հիմնադրմանը: Իթթիհաթականները միայն մեկ միջոց էին տեսնում այդ զարգացումը կասեցնելու համար՝ հայերի զտումը [30]:

Սոցիալիզմի և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր աշխարհաքաղաքական իրավիճակ առաջացավ, վերացավ երբեմնի երկբևեռ աշխարհը և հետագա համարյա մի ամբողջ տասնամյակի ընթացքում ԱՄՆ միաբևեռ աշխարհ ղեկավարողի դիրքում էր հանդես գալիս: Ասենք՝ նա այդ մտադրությունից չի հրաժարվել նաև այսօր: Սակայն 21-րդ դարի սկզբներից սկսած ակնհայտ է դառնում, որ արդեն բազմաբևեռ աշխարհ է ուրվագծվում, ընդ որում՝ և՛ ի դեմս Ռուսաստանի, և՛ ընդհանրական Եվրոպական Միության, և՛ Չինաստանի և այլն: Մեր կարծիքով յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր պետություն պետք է ունենա ճկուն և ընդգծված հստակ ազգային-պետական դիվանագիտություն, որը բացառապես կծառայի մեր պետության դերի և հեղինակության ամրապնդմանը միջազգային ամենատարբեր հարթակներում: Ցավոք,

մեր դիվանագիտությունը դեռևս գտնվում է կայացման փուլում և հուսանք, որ կկարողանա հստակ կողմնորոշվել `ամուր պահելով հայկական երկու պետություններ դիվանագիտական շահերը:

Աշխարհաքաղաքական այս մրցակցության պայմաններում նորից հրատապ են դառնում հայկական պետական այրերի կեցվածքի, դիվանագիտության հետ կապված դասեր: Այսօր մերձավոր Արևելքում և հատկապես Թուրքիայում տեղի ունեցող երևույթները՝ քրդական ազգային ազատագրական պայքարը և քրդական անկախ պետության ստեղծման նախադրյալները, հարմար պահ է նաև աշխարհին հիշեցնել Հայկական հարցի արդիականացման մասին: Հուսանք, որ գոնե այս անգամ մեր դիվանագիտությունը, անցյալից դասեր քաղելով, կարող է ավելի ճկուն գտնվել, օգտվել բազմաբևեռ ուրվագծի ներքին հակասություններից և հասնել գոնե նվազագույնին, այն է. ԼՂՀ-ի ճանաչմանը, կամ էլ նրա նկատմամբ Ադրբեջանի ունեցած հավակնություններից հրաժարմանը: 2016 թ. ապրիլին քառորյա պատերազմում Մենք ևս մեկ անգամ համոզվեցինք, որ հայության ու մեր երկու պետությունների միակ ռազմավարական դաշնակիցը հայ ժողովուրդն է՝ իր ողջ ներուժով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ադոնց Ն., Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, -116 էջ:
2. Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2002, -172 էջ:
3. Աղայան Ծ., Հայ ժողովրդի պայքարի պատմությունից, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, -870 էջ:
4. Աքչան Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Երևան, Տիգրան Մեծ, 2015, -632էջ:
5. Բաբգեն վարդապետ, Հայկական հարցը եւ Պօղոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914, 29 էջ http://lraber.asj-oa.am/
6. Դանիելյան Է., Մելքոնյան Ա., Հայոց պատմություն հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2008, -352 էջ:
7. Եսայան Ա. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, «Միտք» հրատ., 1965, -373 էջ:
8. Լազյան Գ., Հայաստանը և Հայ Դատը հայ և ռուս հարաբերություններու լույսին տակ, Երևան, 1991:
9. Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հատ. Ա, Փարիզ, 1934 ,ըստ Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, 283 էջ:
10. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, 1995, -100 էջ:
11. Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2003, -400 էջ:
12. Կիրակոսյան Ա.,ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և արևմտահայությունը (19-րդ-1914 թ.) Երևան ԵՊՀ հրատ. 2014, 328 էջ:
13. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, «Նորավանք» հրատ., 2006, 103 էջ:
14. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դարի 70-ական թթ., Երևան, «Հայաստան» հրատ., 1978, 368 էջ: :

15. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը 19-րդ դ. 80-ական թթ., Երևան, «Հայաստան» հրատ., 1980, 456 էջ :
16. Հայ ժողովրդի պատմություն, հատ. 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, 1050 էջ:
17. Ղամբարյան Ա., Դիվանագիտական պայքարը Հայկական հարցի շուրջ և Անգլիայի քաղաքականությունը 1913 թ. երկրորդ կես // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, թ. 2, 308 էջ:
18. Ղամբարյան Ա, Հայկական հարցը 1912-1914 թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2006, 232 էջ
19. Չերազ Մ., Հայկական խնդիր, Վենետիկ, 1917, էջ 29 ըստ Ղամբարյան Ա.
20. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հատ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 724 էջ:
21. Պողոսյան Ս., Հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. Ռուս-Թուրքական համաձայնագրի ստորագրման շուրջ, Երևան 2008, 324 էջ:
22. Պողոսյան Ս., Քրդերը և հայական հարցը, Երևան, «Հայաստան» հրատ., 1991, 455 էջ:
23. Սահակյան Ռ., Հայկական հարցը և Ֆրանսիան 1870-1890 թթ. //Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, 1994, թ. 1-2, 292 էջ:
24. Սարգսյան Ե., Հայկական հարցը և Ռուսաստանը 1912-1914«Պատմա-բանասիրական հանդես», 1995 թ., 135 էջ :
25. Սարգսյան Ս., Հայկական հարցը և հայկական սահմանադրական ռամկավարները, հայագիտության հարցեր, հանդես 2, Երևան 2014, 324 էջ:
26. Սարուխանյան Հ., Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում 1860-1910, h. 1, Թիֆլիս, 1912, էջ 270, http://hpj.asj-oa.am
27. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Երևան, ԵՊՀ հրատ., 2010, 1204 էջ: Օտարալեզու Գրականության ցանկ
28. Киракосян Д., Западная Армения вгоды первой мировой войны, Ереван, 1971, 112 стр.
29. Микаелян В., Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива Министерства иностранных дел Кайзеровской Германии. Сб. док., ред. 1995, 410 стр.
30. Положение армян в Турци и до вмешательства держав в 1895 году, Москва, 1896, http://hpj.asj-oa.am
31. Протопопов А., КозьменкоВ., ЕлмановаН., История международных отношений ивнешней политики России. 1648-2005, Москва, изд. “Аспект-пресс”, 2008, 399 Էլեկտրոնային կայքէջեր
32. www. hpj. asj-oa.am
33. http://www.armeniansgenocide.am
34. http://akunq.net/am

РЕЗЮМЕ

Обсуждение Армянского вопроса в 1912-1914 г.

Бено Мирзоян

Ключевые слова: Армянский вопрос, программа реформ, международная дипломатия, Балканская война, Российско-турецкое соглашение 1914 года, национальная делегация, Великие державы, Высокая дверь.

Армянский вопрос не получил справедливого решения в 1912-1914 г., так как:

- Армянский вопрос стал предметом столкновения интересов великих держав.
- Турецкое правительство не было готово выполнить план примирения.
- Первая мировая война стала препятствием для великих держав, чтобы они заставили Турция выполнить реформы.

В разные периоды истории влияние той или иной великой державы на международной арене зависело от интересов этих стран. Независимо от внешних формул, их поступки всегда имели внутренние причины и преследовали свои собственные национальные интересы. Однако их реализация не означает, что маленькие нации не должны иметь возможность использовать исторические моменты и полагаться на ту или иную силу, независимо от их внутренних побуждений, для продвижения своих собственных интересов.

Другими словами, речь идет о дипломатической гибкости.

SUMMARY

The Discussions of the Armenian Question in 1912-1914.

Beno Mirzoyan

Key words: Armenian question, reform program, international diplomacy, Balkan war, Russian-Turkish Agreement of 1914, national delegation, Great Powers, High door.

The Armenian issue did not receive a fair solution in 1912-1914, as:

- The Armenian issue has become a subject of clash of interests of the great powers.
- The Turkish government was not prepared to implement the reconciliation plan.
- The first world war was an obstacle for the great powers to force Turkey to implement reforms.

In different periods of history, the influence of a great power in the international arena depended on the interests of these countries. Regardless of external formulas, their actions have always had internal causes and pursued their own national interests. However, their realization does not mean that small Nations should not be able to use historical moments and rely on a particular force, regardless of their internal motives, to advance their own interests.

In other words, it is diplomatic flexibility.